    - փոփոխել սյան լայնությունը Մկնիկի օգնությամբ
    - փոփոխել սյան լայնությունը Մենյուի Format\Column\Width... հրամանով
    - գունավորել տողը կամ սյունակը Fill Color գործիքով
- *կատարել* գործողություններ Թերթի (Worksheet) հետ`
    - մտցնել նոր Թերթ մենյուի Insert\Worksheet հրամանով

- ջնջել Թերթը Edit\Delete Sheet հրամանով
    - Պատճենել կամ Տեղափոխել Թերթը Մենյուի Edit\Move or Copy Sheet հրամանով
    - անվանափոխել Թերթը Մենյուի Format\Sheet\Rename հրամանով
    - թաքցնել Թերթը Մենյուի Format\Sheet\Hide հրամանով
- *ավելացնել* նոր տող (տողեր) Մենյուի Insert\Row հրամանով
- *ավելացնել* նոր սյուն (սյուներ) Մենյուի Insert\Column հրամանով
- *ջնջել* տողը (տողերը) և սյունը (սյուները) Մենյուի Edit\Delete... հրամանով
- *իմանալ* Մասշտաբ (Zoom) գործիքը
- *միավորել* վանդակները
    - Merge and Center գործիքով
    - Մենյուի Format\Cells...\Alignment\Merge Cells հրամանով

- *պատճենել* աղյուսակային տվյալները
    - Copy, Paste գործիքների օգնությամբ
    - CTRL + C, CTRL + V հրամաններով
    - Մկնիկի օգնությամբ
- *տեղափոխել* աղյուսակային տվյալները
    - Cut, Paste գործիքների օգնությամբ
    - CTRL + X, CTRL + V հրամաններով
    - Մկնիկի օգնությամբ
- *կատարել* տվյալների Ինքնալցման գործողություն
    - Մկնիկի օգնությամբ
    - Մենյուի Edit\Fill Պատուհանի հրամաններով
    - CTRL + D կամ CTRL + R կոճակներով
- *դասակարգել* աղյուսակային տվյալները
    - Sort Ascending և Sort Descending գործիքներով
    - մենյուի Data\Sort... հրամանով
- *կատարել* տվյալների *Ֆիլտրացիա* մենյուի Data\Filter\Autofilter հրամանով
- *կազմել* մաթեմատիկական բանաձևեր
- *կատարել* հաշվարկներ, օգտագործելով գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունները

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

- Ուսանողին կտրվի հարցեր տվյալների Ֆորմատի ձևերի վերաբերյալ ( Ընդհանուր ձևի ֆորմատ, Թվային ֆորմատ, Տեքստային ֆորմատ, Տարադրամային ֆորմատ, Օրացուցային ֆորմատ) կիանձնարարվի ստեղնաշարի օգնությամբ *մուտքագրել*
    - տեքստ (առանց ֆորմատավորման)
    - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
    - թվանշաններ
- *ջնջել* աղյուսակի վանդակի պարունակությունը
    - Delete կոճակի օգնությամբ
    - Backspace կոճակի օգնությամբ
    - տեքստի անմիջական մուտքագրումով
- *կատարել* աղյուսակի վանդակում տարրական ուղղումներ
    - F2 կոճակով
    - Մկնիկի կրկնակի հարվածով
    - Բանաձևերի տողի օգնությամբ
- *նշել*
    - վանդակների միջակայք մկնիկի օգնությամբ
    - վանդակների միջակայք ստեղնաշարի SHIFT կոճակի օգնությամբ
    - ամբողջ սյունակը
    - ամբողջ տողը
    - հաջորդական կամ ոչ հաջորդական տողեր, սյունակներ, վանդակներ
    - բոլոր վանդակները CTRL + A կոճակներով
- *ֆորմատավորել* մուտքագրված տեքստը՝
    - փոփոխել տառաչափը Size գործիքի օգնությամբ
    - փոփոխել տառատեսակը Font գործիքի օգնությամբ
    - հաստացնել տեքստը Bold գործիքի օգնությամբ
    - թեքել տեքստը Italic գործիքի օգնությամբ
    - ընդգծել տեքստը Underline գործիքի օգնությամբ
    - գունավորել տեքստը Font Color գործիքով
    - շրջանակել վանդակը Borders գործիքով
    - կատարել տեքստի հավասարեցում Left, Center, Right գործիքներով

- *փոխել* տվյալների Ֆորմատը Մենյուի Format\Cells... հրամանով
- *ֆորմատավորել* աղյուսակի սյունը և տողը՝
  - փոփոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
  - փոփոխել տողի բարձրությունը Մենյուի Format\Row\Height... հարմանով
  - փոփոխել սյան լայնությունը Մկնիկի օգնությամբ
  - փոփոխել սյան լայնությունը Մենյուի Format\Column\Width... հրամանով
  - գունավորել տողը կամ սյունակը Fill Color գործիքով
- *կատարել* գործողություններ Թերթի (Worksheet) հետ՝
  - մտցնել նոր Թերթ մենյուի Insert\Worksheet հրամանով
  - ջնջել Թերթը Edit\Delete Sheet հրամանով
  - Պատճենել կամ Տեղափոխել Թերթը Մենյուի Edit\Move or Copy Sheet հրամանով
  - անվանափոխել Թերթը Մենյուի Format\Sheet\Rename հրամանով
  - թաքցնել Թերթը Մենյուի Format\Sheet\Hide հրամանով
- *ավելացնել* նոր տող (տողեր) Մենյուի Insert\Row հրամանով
- *ավելացնել* նոր սյուն (սյուներ) Մենյուի Insert\Column հրամանով
- *ջնջել* տողը (տողերը) և սյունը (սյուները) Մենյուի Edit\Delete... հրամանով
- *միավորել* վանդակները
  - Merge and Center գործիքով
  - Մենյուի Format\Cells...\Alignment\Merge Cells հրամանով

- *պատճենել* աղյուսակային տվյալները
  - Copy, Paste գործիքների օգնությամբ
  - CTRL + C, CTRL + V հրամաններով
  - Մկնիկի օգնությամբ
- *տեղափոխել* աղյուսակային տվյալները
  - Cut, Paste գործիքների օգնությամբ
  - CTRL + X, CTRL + V հրամաններով
  - Մկնիկի օգնությամբ
- *կատարել* տվյալների Ինքնալցման գործողություն
  - Մկնիկի օգնությամբ
  - Մենյուի Edit\Fill Պատուհանի հրամաններով
  - CTRL + D կամ CTRL + R կոճակներով
- *դասակարգել* աղյուսակային տվյալները
  - Sort Ascending և Sort Descending գործիքներով
  - մենյուի Data\Sort... հրամանով
- *կատարել* տվյալների *Ֆիլտրացիա* մենյուի Data\Filter\Autofilter հրամանով
- *կազմել* մաթեմատիկական բանաձևեր
- *կատարել* հաշվարկներ, օգտագործելով գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունները

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե բոլոր առաջադրանքները կատարվում են անթերի:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

## ԱՐԴՅՈՒՆՔ 9. Ինտերնետում աշխատելու իմացություն

## ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Ինտերնետ հասկացության նշանակությունը
- *ճանաչել* Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը
- *իմանալ* Ինտերնետային Հասցե հասկացությունը
- *իմանալ* History հրամանի նշանակությունը
- *իմանալ* Favorites հրամանի նշանակությունը
- *իմանալ* Stop հրամանի նշանակությունը
- *իմանալ* Refresh հրամանի նշանակությունը
- *իմանալ* Back և Forward կոճակների նշանակությունը
- *պատճենել* տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից
- *պատճենել* գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից

- *իմանալ* ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները
- ըստ չափանիշների *որոնել* ինֆորմացիա
- *իմանալ* էլեկտրոնային փոստի նշանակություն
- *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել Ինտերնետ և ինտերնետային հասցե հասկացության նշանակությունը, History հրամանի նշանակությունը, Favorites հրամանի նշանակությունը, Stop հրամանի նշանակությունը, Refresh հրամանի նշանակությունը, Back և Forward կոճակների նշանակությունը, էլեկտրոնային փոստի նշանակությունը: Կհանձնարարվի *պատճենել* տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից, *պատճենել* գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից, ցուցադրել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները, ըստ չափանիշների *որոնել* ինֆորմացիա, *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե բոլոր առաջադրանքները կատարվում են անթերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, համակարգիչ, ինտերնետ կապ:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը՝** **ԶԲՍԾ-4-08-002**

**Մոդուլի տևողությունը՝** 62 ժամ դասախոսություն

82 ժամ գործնական պարապմունք

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ անհրաժեշտ գիտելիքներ տնտեսագիտության հիմունքների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել անհրաժեշտ տնտեսական տեղեկատվություն որոնելու և օգտագործելու, տնտեսությունում կատարվող փոփոխությունները վերլուծելու կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը կիմանա տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթները, նյութական արտադրության և ծառայությունների կազմակերպման ու բաշխման հիմքում ընկած տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները: Կտիրապետի տնտեսական երևույթների ընկալման, գնահատման և վերլուծության մեթոդներին: Կիմանա զբոսաշրջության ենթակառուցվածքը, նյութատեխնիկական բազան և ինդուստրիան, այնտեղ գործող հիմնական սուբյեկտները, դրանց տնտեսական համագործակցության հիմունքները: Կիմանա զբոսաշրջության ոլորտը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները: Կըմբռնի զբոսաշրջության շուկայում տեղի ունեցող զբոսաշրջային ծառայությունների բաշխման, փոխանակման և դրամական հոսքերի շրջանառության մեխանիզմները: Կիմանա զբոսաշրջության ոլորտում ապրանքի նախագծման, մշակման փուլից մինչև իրացման ժամանակահատված ընկած գործընթացները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթները, նյութական արտադրության և ծառայությունների կազմակերպման ու բաշխման հիմքում ընկած տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները.**
2. **իմանա զբոսաշրջության ենթակառուցվածքը, նյութատեխնիկական բազան և ինդուստրիան, գործող հիմնական սուբյեկտները, դրանց տնտեսական համագործակցության հիմունքները.**
3. **իմանա զբոսաշրջության ոլորտը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները.**

4. իմանա գրքասաշրջության շուկայում տեղի ունեցող գրքասաշրջային ծառայությունների բաշխման, փոխանակման և դրամական հոսքերի շրջանառության մեխանիզմները.
5. իրականացնի գրքասաշրջության ոլորտում ապրանքի նախագծման, մշակման փուլից մինչև իրացման ժամանակահատվածում ընկած գործընթացները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթները, նյութական արտադրության և ծառայությունների կազմակերպման ու բաշխման հիմքում ընկած տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում տնտեսագիտության տեսության ընդհանուր դրույթները.

բ. ճիշտ է տարբերակում նյութական արտադրության և ծառայության ոլորտները.

գ. ճիշտ է ներկայացնում տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները, տնտեսագիտության կողմից դրանց ուսումնասիրման ու բացահայտման մեխանիզմները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի առաջադրանք ներկայացնել տնտեսագիտության ուսումնասիրության առարկան, բերել ինքնուրույն օրինակներ նյութական արտադրության և ծառայությունների ոլորտներից, նշել դրանց նմանություններն ու առանձնահատկությունները, կտրվի որևէ տնտեսական երևույթի օրինակ և կհանձնարարվի մեկնաբանել այն բոլոր տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները որոնք հատուկ են այդ իրավիճակին:

Արդյունքը համարվում է ձեռբերված, եթե ուսանողը բավարար մակարդակով է կատարում վերը նշված բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ գրքասաշրջության ենթակառուցվածքը, նյութատեխնիկական բազան և ինդուստրիան, ոլորտում գործող հիմնական սուբյեկտները, նրանց տնտեսական համագործակցության հիմունքները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում գրքասաշրջության ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան, դրանց իրավիճակային վերլուծությունը.

բ. ճիշտ է ներկայացնում գրքասաշրջության ինդուստրիան, դրա տարրերը, զարգացման նախադրյալներն ու միտումները.

գ. ճիշտ է դասակարգում գրքասաշրջության ոլորտում գործող սուբյեկտները, զանազանում դրանց գործունեության առանձնահատկություններն և ընկալում միմյանց հետ տնտեսական կապերի առաջացման մղումներն ու համագործակցության հիմքերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Դասախոսը բերում է գրքասաշրջության ոլորտի որևէ տնտեսական սուբյեկտի օրինակ և հանձնարարում ուսանողին սխեմատիկորեն ներկայացնել դրա գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան, ինչպես նաև թվարկել ինդուստրիայում գործող այլ սուբյեկտներին և նշել թե դրանց հետ ինչպիսի տնտեսական փոխհարաբերություններ են տեղի ունենում:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան, ամբողջությամբ թվարկում է զբոսաշրջության ինդուստրիայի տարրերը, և դրանց միջև տնտեսական կապերը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հնարավորություններ (համացանց, ժողովածուներ):

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ զբոսաշրջության ոլորտը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները.**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. ճիշտ է ներկայացնում տնտեսական ցուցանիշների այն ցանկը, որոնք բնութագրում են զբոսաշրջության ոլորտը.

բ. ճիշտ է նկարագրում զբոսաշրջության տնտեսական արդյունավետությունը և այն հաշվարկելու եղանակները.

գ. ճիշտ է բնութագրում բազմարկիչի էֆեկտը զբոսաշրջության ոլորտում և տնտեսության այլ ճյուղերի օգուտները.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Դասախոսը ուսանողին տալիս է ելակետային տվյալներ և հանձնարարում ուսանողին ըստ դրանց հաշվարկել հետևյալ տնտեսական ցուցանիշները՝ իրացված տուր-օրերի քանակը, զբոսաշրջային շուկայի սեզոնայնության գործակիցը, այնուհետև պահանջում ստացված արդյունքների հիման վրա նկարագրել զբոսաշրջության տնտեսական արդյունավետությունը և տնտեսության այլ ճյուղերի օգուտները:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ճիշտ է հաշվարկում վերոնշյալ ցուցանիշները, տրամաբանորեն է մեկնաբանում ստացված արդյունքները, կարողանում է տարբերակել տնտեսության ճյուղերն ու ընբռնել բազմարկիչի ազդեցությամբ վերջիններիս օգուտներն զբոսաշրջության զարգացումից:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և վիճակագրական նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 16 ժամ
Գործնական աշխատանք՝ 22 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ զբոսաշրջության շուկայում տեղի ունեցող զբոսաշրջային ծառայությունների բաշխման, փոխանակման և դրամական հոսքերի շրջանառության մեխանիզմները:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. ճիշտ է ըմբռնում «շուկա», «շուկայական հարաբերություններ», «շուկայական տնտեսություն» հասկացությունները, ինչպես նաև շուկայում գործող հիմնական օրենքներն ու օրինաչափությունները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության շուկայի առանձնահատկությունները, դրանում գործող սուբյեկտները, նրանց միջև տեղի ունեցող մրցակցային պայքարն ու համագործակցությունը.

գ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային կազմակերպությունների կողմից շուկայում զբոսաշրջային ապրանքի ներդրման, առաջխաղացման ձևերը, մարքեթինգի գործառույթները.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Դասախոսը թեստի միջոցով ստուգում է ուսանողի գիտելիքները «շուկա», «շուկայական հարաբերություններ», «շուկայական տնտեսություն» հասկացությունների, զբոսաշրջության շուկայի առանձնահատկությունների վերաբերյալ: Բերում է շուկայական իրավիճակի օրինակ և պահանջում ուսանողին գրավոր ներկայացնել տվյալ իրավիճակում զբոսաշրջային ապրանքի ներդրման ու առաջխաղացման ձևերը:

Արդյունքը համարվում է ձեռբերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստի հարցերին և բավարար գիտելիքներ է ցուցաբերում զբոսաշրջային ապրանքի ներդրման ու առաջխաղացման ձևերն ընտրելիս:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իրականացնել զբոսաշրջության ոլորտում ապրանքի նախագծման, մշակման փուլից մինչև իրացման ժամանակահատվածն ընկած գործընթացները:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային ապրանքի կազմն ու կառուցվածքը, դրա մշակման և արտադրման համար անհրաժեշտ միջոցները, ռեսուրսներն ու աշխատանքը.

բ. ճիշտ է հաշվարկում ապրանքի գինը, ինքնարժեքը, գնի մեջ մտնող հարկադրույքները և ավելացվող շահույթը.

գ. ճիշտ է ներկայացնում ապրանքի վաճառահանման գործընթացը, մեխանիզմները, համագործակցությունը միջնորդ օղակների հետ, ցուցադրում այդպիսի համագործակցության օրինակներ.

դ. ճիշտ է ներկայացնում ապրանքի վաճառքից հետո՝ զբոսաշրջիկներին դիմավորելուց մինչև ճանապարհումն ընկած ժամանակահատվածում մատուցվող ծառայություններն ու սպասարկման կարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Դասախոսը ներկայացնում է զբոսաշրջային պատվերի օրինակ, իսկ ուսանողը ըստ դրա կազմում է զբոսաշրջային ապրանք՝ մանրամասն նշելով մշակման գործընթացը, անհրաժեշտ ռեսուրսները, գնագոյացումը, վաճառքի կազմակերպումն ու զբոսաշրջիկների սպասարկումը:

Արդյունքը համարվում է ձեռբերված, եթե ուսանողը ապրանքը կազմելուց ներառում է բոլոր անհրաժեշտ տարրերը, ճիշտ է հաշվարկում ապրանքի գինը, ճիշտ է ներկայացնում վաճառահանման գործընթացը և ճիշտ է նշում զբոսաշրջիկներին մատուցվող ծառայություններն ու սպասարկման կարգը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 14 ժամ
Գործնական աշխատանք՝ 20 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

**Մոդուլի դասիչը`** **ԶԲՍՇ-4-08-003**

**Մոդուլի նպատակը`**

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատակազմի, հաճախորդների և գործընկերների հետ շփման հոգեբանական հիմունքների իմացություն և հաստատությունում դրական մթնոլորտ ստեղծելու ճիշտ վարվելակերպի կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը` ուսանողը կկարողանա ճիշտ շփվել աշխատակազմի, հաճախորդների և գործընկերների հետ, աշխատանքի ընթացքում կկարողանա շարունակել դիմացինի նախաձեռնությամբ սկսված զրույցը և իր իրավասության շրջանակներում լուծել աշխատանքային և աշխատակազմի մոտ առաջացող խնդիրները:

**Մոդուլի տևողությունը`** 30 ժամ դասախոսություն

42 ժամ գործնական պարապմունք

**Մուտքային պահանջները`** **Չկան**

**Ուսումնառության արդյունքները`**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է`

1. **իմանա մարդու հիմնական հոգեբանական տիպերը, ինչպես նաև հաղորդակցման, շփման հոգեբանական հիմունքները, սկզբունքները և հմտությունները (ժեստերի լեզու, դիմախաղ) .**
2. **կազմակերպությունում ստեղծի ջերմ մթնոլորտ, դրսևորի ճիշտ վարվելակերպ, ինչպես նաև ուշադիր վերաբերմունք գործընկերների և հաճախորդների նկատմամբ` ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, ինչպես նաև գործընկերների և հաճախորդների հոգեբանական տիպից և իրավիճակից.**
3. **իր իրավասության շրջանակներում լուծի առաջացող հնարավոր խնդիրները, անհրաժեշտության դեպքում խնդիրը ճիշտ ներկայացնի իր վերադասին.**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ մարդու հոգեբանական հիմնական տիպերը, ինչպես նաև հաղորդակցման/շփման հոգեբանական հիմունքները, սկզբունքները և հմտությունները (ժեստերի լեզու, դիմախաղ).**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`</u>

ա. ճիշտ է նկարագրում մարդկանց հոգեբանական հիմնական տեսակները և հաղորդակցման/շփման հոգեբանական հիմունքները, սկզբունքները և հմտությունները (ժեստերի լեզու, դիմախաղ):

բ. կարողանում է ճիշտ որոշել «մարդու»[1] հոգեբանական տեսակը.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին հանձնարարվում է բնութագրել մարդկանց հոգեբանական հիմնական տեսակները, ներկայացնել հաղորդակցման/շփման հոգեբանական հիմունքները, սկզբունքները և հմտությունները: Ուսանողին կտրվի տեղեկատվություն, որևէ մարդու վարքագծի վերաբերյալ և կառաջարկվի որոշել նրա հոգեբանական տեսակը:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պայմանական մարդու տեսակը ճիշտ է որոշված:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 12 ժամ

Գործնական աշխատանք` 18 ժամ

---

[1] որպես այդպիսին կարող է հանդիսանալ իր դասընկերը

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմակերպությունում ստեղծել ջերմ մթնոլորտ, դրսևորել ճիշտ վարվելակերպ, ինչպես նաև ուշադիր վերաբերմունք գործընկերների և հաճախորդների նկատմամբ՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, ինչպես նաև գործընկերների և հաճախորդների հոգեբանական տիպից և իրավիճակից:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում կազմակերպությունում ջերմ մթնոլորտի պատկերացումը:

բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների և հաճախորդների նկատմամբ ճիշտ վարվելակերպ, ինչպես նաև ուշադիր վերաբերմունք դրսևորելու ձևերը և մեթոդները՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, ինչպես նաև գործընկերների և հաճախորդների հոգեբանական տիպից և իրավիճակից.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել պայմանական կազմակերպությունում ջերմ մթնոլորտի առկայությունը: Ինչպես նաև կառաջադրվի պայմանական իրավիճակ, որի արդյունքում ուսանողը պետք է ներկայացնի գործընկերների և հաճախորդների նկատմամբ ճիշտ վարվելակերպ, ինչպես նաև ուշադիր վերաբերմունք դրսևորելու ձևերը և մեթոդները՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, ինչպես նաև գործընկերների և հաճախորդների հոգեբանական տիպից:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե տրված պատասխանները մասնագիտորեն համոզիչ են ձևակերպված:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իր իրավասության շրջանակներում լուծել առաջացող հնարավոր խնդիրները, անհրաժեշտության դեպքում խնդիրը ճիշտ ներկայացնել իր վերադասին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում իր իրավասությունների շրջանակը կազմակերպությունում սահմանված կանոններին համապատասխան.

բ. ճիշտ է ներկայացնում առաջացող հնարավոր խնդիրները և դրանց լուծման եղանակները՝ իր իրավասության շրջանակներում.

գ. ճիշտ է ձևակերպում և ներկայացնում խնդիրն իր վերադասին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուսանողին կհանձնարարվի նկարագրել որն է կազմակերպությունում իր՝ որպես աշխատակցի, իրավասությունների շրջանակը, կազմակերպությունում առաջացող հնարավոր խնդիրները և պրոբլեմային ուսուցման միջոցով կառաջադրվի խնդիր, որի արդյունքում ուսանողը պետք է առաջադրի իր իրավասության շրջանակններում խնդրի լուծման եղանակներ, որից հետո պետք է ձևակերպի, թե խնդիրը ինչպես է ներկայացվելու վերադասին:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե խնդրի լուծման առաջադրված եղանակները մասնագիտորեն ճիշտ և համոզիչ են ձևակերպված:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ»

**Մոդուլի դասիչը՝** **ԶԲՍՇ-4-08-004**

**Մոդուլի նպատակը՝**

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ միջազգային զբոսաշրջության պատմության, Հայաստանում զբոսաշրջության պատմության, զբոսաշրջության միջազգայնորեն ընդունված ձևերի և տեսակների մասին:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կիմանա ինչ է զբոսաշրջությունը, երբ է այն ճանաչվել միջազգայնորեն, Հայաստանում զբոսաշրջության բնագավառի զարգացումները, զբոսաշրջության միջազգայնորեն ընդունված ձևերն ու տեսակները:

**Մոդուլի տևողությունը՝** 38 ժամ դասախոսություն

34 ժամ գործնական պարապմունք

**Մուտքային պահանջները՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **իմանա զբոսաշրջության էությունը և զբոսաշրջության պատմությունը.**
2. **իմանա զբոսաշրջության ձևերը.**
3. **իմանա զբոսաշրջության տեսակները:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ զբոսաշրջության էությունը և զբոսաշրջության պատմությունը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության սահմանումը և էությունը.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության պատմության հիմնական փուլերն ու ներկայիս զարգացումները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին տրվում է թեստ որտեղ ներկայացված է զբոսաշրջության սահմանման, բնութագրման և պատմական զարգացման փուլերի վերաբերյալ հարցեր որտեղից նա պետք է ընտրի ճիշտ տարբերակները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն ընդգծում է թեստում գտնվող ճիշտ պատասխանների երկու երրորդը:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ</u>

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

<u>ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ</u>

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ զբոսաշրջության ձևերը:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության ձևերը և դրանց հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները.

բ. ճիշտ է տարբերակում զբոսաշրջության ձևերը.

գ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության ձևերի առանձնահատկությունները և դրանց ներկայացվող պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է թեստ որտեղ ներկայացված է զբոսաշրջության ձևերի, դրանց տարբերակումների, առանձնահատկությունների վերաբերյալ հարցեր որտեղից նա պետք է ընտրի ճիշտ տարբերակները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն ընդգծում է թեստում գտնվող ճիշտ պատասխանների երկու երրորդը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 10 ժամ

Գործնական աշխատանք` 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ զբոսաշրջության տեսակները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության տեսակների հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները.

բ. ճիշտ է տարբերակում զբոսաշրջության տեսակները.

գ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության տեսակների առանձնահատկությունները և դրանց ներկայացվող պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է թեստ որտեղ ներկայացված է զբոսաշրջության տեսակների, դրանց տարբերակումների, առանձնահատկությունների վերաբերյալ հարցեր որտեղից նա պետք է ընտրի ճիշտ տարբերակները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն ընդգծում է թեստում գտնվող ճիշտ պատասխանների երկու երրորդը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 10 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը` **ԶԲՍՇ-4-08-005**

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է` սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի պատմամշակութային հուշարձանների, առողջարանների, բուսական և կենդանական աշխարհի, հայկական ավանդույթների մասին, որոնք անհրաժեշտ են դեպի Հայաստան զբոսաշրջային փաթեթ կազմելու համար:

Մոդուլի տևողությունը` 56 ժամ դասախոսություն

52 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները`

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի **ԶԲՍՇ-4-08-004** մոդուլը:

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **Իմանա Հայաստանի պատմամշակութային հուշարձանները.**
2. **իմանա Հայաստանի առողջարանները.**
3. **իմանա հայկական բնաշխարհի առանձնահատկությունները, կենսաբազմազանությունը.**
4. **իմանա ավանդույթների մասին**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ Հայաստանի պատմամշակութային հուշարձանները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`</u>

ա. տարբերակում է պատմական և մշակութային հուշարձանները, ճիշտ է բնութագրում դրանք.

բ. ճիշտ է նշում առաջադրված պատմամշակութային հուշարձանների աշխարհագրական դիրքը և ցույց տալիս դրանք քարտեզի վրա.

գ. ճիշտ է ներկայացնում առաջադրված պատմամշակութային հուշարձանների պատմությունը, դրանց հիմնական բնութագիրը:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ</u>

Ուսանողին կհանձնարարվի քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ում առաջադրված զբոսաշրջային տարածաշրջանը և ներկայացնել այդ վայրում գտնվող պատմամշակութային հուշարձաններն ու դրանց պատմությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է ցուցադրում քարտեզի վրա առաջադրված զբոսաշրջային տարածաշրջանը, այնտեղ գտնվող պատմամշակութային հուշարձանները և ներկայացնում դրանց պատմությունը:

<u>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ</u>

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 26 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ Հայաստանի առողջարանները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է թվարկում Հայաստանի հիմնական առողջարանները,

բ. ճիշտ է նշում առաջադրված առողջարանների աշխարհագրական դիրքը և ցույց տալիս դրանք քարտեզի վրա.

գ. տարբերակում առողջարանները՝ ըստ դրանց բուժման հատկությունների, ճիշտ է տալիս դրանց բնութագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարարվի քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ում առաջադրված զբոսաշրջային տարածաշրջանը և ներկայացնել այդ վայրում գտնվող առողջարանները, բնութագրել դրանց բուժարարական հատկությունները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է ցուցադրում քարտեզի վրա առաջադրված զբոսաշրջային տարածաշրջանը, այնտեղ գտնվող առողջարանները և ներկայացնում դրանց բուժարարական հատկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ հայկական բնաշխարհի առանձնահատկությունները, կենսաբազմազանությունը.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում հայկական բնաշխարհի առանձնահատկությունները

բ. ճիշտ է ներկայացնում հայկական բնաշխարհի կենսաբազմազանությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի առաջադրանք ներկայացնել հայկական բնաշխարհի կոնկրետ տարածաշրջանի առանձնահատկությունները, կենդանիների և բույսերի հիմնական տեսակները:

Արդյունքը կհամարվի ձեռք բերված եթե տրված պատասխանները լինեն մասնագիտորեն ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ հայկական ավանդույթները, սովորույթները, ծեսերը և ծիսակատարությունները**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում հայկական ավանդույթները.

բ. ճիշտ է նկարագրում հայկական ծեսերը.
գ. ճիշտ է ներկայացնում հայկական ծիսակատարությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կհանձնարավի մեկնաբանել հայկական կոնկրետ ավանդույթի խորհուրդը, նպատակը և պատմական նախադրյալները, կտրվի թեստ որտեղ պետք է նշել ծեսերից որոնք են հայկական և մեկնաբանել հայկական կոնկրետ ծիսակատարության արարողակարգը:

Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար եթե ուսանողը մասնագիտորեն ճիշտ է մեկնաբանել առաջադրված ավանդույթի խորհուրդը, նպատակը և պատմական նախադրյալները, ճիշտ է ընդգծել թեստում նշված հայկական ծեսերը և հիմնականում ճիշտ է մեկնաբանել առաջադրված ծիսակատարության արարողակարգը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 10 ժամ

Գործնական աշխատանք` 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՀ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍԾ-4-08-006**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ անհրաժեշտ գիտելիքներ զբոսաշրջության ոլորտում ՀՀ օրենսդրության վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել անհրաժեշտ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը որոնելու և կիրառելու կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը կիմանա պետական քաղաքականությունը զբոսաշրջության բնագավառում, դրա հիմնական սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, միջոցները, որոնցով իրականացվում է այդ քաղաքականությունը, ոլորտում կառավարության իրավասությունները: Կծանոթանա «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթներին, օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններին: Կիմանա օրենքով սահմանված՝ զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտներին ներկայացվող պահանջները, վերջիններիս պարտականությունները և իրավախախտումների դեպքում պատասխանատվության ենթարկվելու կարգը:

Մոդուլի տևողությունը՝ 42 ժամ դասախոսություն

30 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի **ԶԲՍԾ-4-08-004** մոդուլը:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **իմանա զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականությունը, դրա հիմնական սկզբունքները.**
2. **իմանա զբոսաշրջության բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրությունը, կիրառի դրա պահանջները.**
3. **իմանա զբոսաշրջության բնագավառին առնչվող միջազգային օրենսդրության հիմնական դրույթները, կիրառի դրա պահանջները:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ զբոսաշրջության բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը, դրա հիմնական սկզբունքները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառում ՀՀ պետական քաղաքականության հիմնական նպատակներն ու գերակա ուղղությունները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության իրականացման միջոցները.

գ. ճիշտ է ներկայացնում ՀՀ կառավարության և զբոսաշրջության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ</u>

Ուսանողին տրվում է թեստ, որտեղ թվարկված են ճիշտ և սխալ դրույթներ կապված զբոսաշրջության բնագավառում ՀՀ պետական քաղաքականության հիմնական նպատակների ու գերակա ուղղությունների, քաղաքականության իրականացման միջոցների, պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունների վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը թեստում ընդգծում է ճիշտ դրույթները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և տեղեկատվական ժողովածուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ զբոսաշրջության բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրությունը, կիրառի դրա պահանջները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման գործիքները, ոլորտում իրավական կարգավորման ենթակա հարաբերությունները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրության հիմնական դրույթները, դրանց կիրարկման անհրաժեշտությունը.

գ. ճիշտ է դասակարգում զբոսաշրջության բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրությունում օգտագործվող հիմնական հասկացությունները, ճիշտ է ներկայացնում դրանց սահմանումները.

դ. ճիշտ է բնութագրում զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտներին ներկայացվող պահանջները և արտոնությունները, դրանց որակավորման, լիցենզավորման՝ օրենսդրությամբ սահմանված կարգը.

ե. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների պարտավորությունները.

զ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների կողմից կատարվող իրավախախտումների դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության ենթարկվելու կարգը.

է. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրության պահանջների կիրառման օրինակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին ներկայացվում է զբոսաշրջության ոլորտում կատարվող տնտեսական և իրավական դեպքեր (զբոսաշրջային կազմակերպության բացում, գրանցում, լիցենզավորում և այլն), և հանձնարարվում նշել այն բոլոր օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը որոնց հետևելու և կիրառելու անհրաժեշտություն է առաջանում առաջադրված գործընթացների ժամանակ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը կարողանում է ճիշտ մեկնաբանել այս կամ այն իրավիճակից բխող օրենքի պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և տեղեկատվական ժողովածուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 14 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. **Իմանալ զբոսաշրջության բնագավառին առնչվող միջազգային օրենսդրության հիմնական դրույթները, կիրառել դրանց պահանջները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառին առնչվող միջազգային օրենսդրության հիմնական դրույթները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառին առնչվող միջազգային օրենսդրության պահանջների՝ ներգնա զբոսաշրջության գործունեության մեջ կիրառման ոլորտներն ու դեպքերը.

գ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության բնագավառին առնչվող միջազգային օրենսդրության պահանջների կիրառման օրինակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին ներկայացվում է միջազգային զբոսաշրջության ոլորտում կատարվող տնտեսական և իրավական դեպքեր (զբոսաշրջային ապրանքի արտահանում, կամ ներմուծում, զբոսաշրջային համաշխարհային որևէ կազմակերպության կազմում անդամագրվում և այլն), և հանձնարարվում նշել միջազգային օրենսդրության հիմնական դրույթները և պահանջները որոնց հետևելու և կիրառելու անհրաժեշտություն է առաջանում առաջադրված գործընթացների ժամանակ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը կարողանում է ճիշտ մեկնաբանել այս կամ այն իրավիճակից բխող օրենքի պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և տեղեկատվական ժողովածուներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ»

Մոդուլի դասիչը` **ԶԲՍԾ-4-08-007**

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հյուրանոցային տնտեսության վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների դասակարգման և տարբերակման կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը` սովորողը կիմանա հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների տեսակները, կկարողանա տարբերակել և ճիշտ դասակարգել այդ հաստատությունները` ըստ դասակարգման չափորոշիչների, ճարտարապետության, առևտրաարդյունաբերական գործունեության բնույթի, գտնվելու վայրի, սպասարկման մակարդակի ու ձևի և այլն: Սովորողը կիմանա տեղավորման միջոցներին ներկայացվող պահանջները` կախված դրանց կարգից և ուղղվածությունից, հյուրանոցային ծառայությունների տրամադրման հիմնական սկզբունքները: Կկարողանա ներկայացնել հարմարավետության աստիճանների ընդհանուր բնութագիրը:

Մոդուլի տևողությունը` 60 ժամ դասախոսություն

84 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները`

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է`

1. **տարբերակի տեղավորման միջոցները` ըստ կարգի, ուղղվածության, գտնվելու վայրի, ճարտարապետության.**
2. **դասակարգի տեղավորման միջոցները և դրանց համարները` ըստ գոյություն ունեցող դասերի.**
3. **իմանա հյուրանոցներին և զբոսաշրջային համալիրներին ներկայացվող պահանջները, մատուցվող ծառայությունների ցանկը.**
4. **իմանա և թվարկի հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հարմարավետության աստիճանները:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տարբերակել տեղավորման միջոցները` ըստ կարգի, ուղղվածության, գտնվելու վայրի, ճարտարապետության և գոյություն ունեցող չափորոշիչների:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`</u>

ա. ճիշտ է ներկայացնում տեղավորման միջոցների հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները.

բ. ճիշտ է տարբերակում տեղավորման տարբեր կարգի և ուղղվածության միջոցները

գ. ճիշտ է տարբերակում տեղավորման միջոցները` ըստ գտնվելու վայրի, ճարտարապետության:

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ</u>

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել տեղավորման միջոցների ըստ կարգի, ուղղվածության գտնվելու վայրի և ճարտարապետության, տրվում է զբոսաշրջային տարածաշրջանի նկարագրություն և պահանջվում ներկայացնել առավել նպատակահարմար տեղավորման միջոցները, որոնք կսպասարկեն տվյալ տարածաշրջան այցելող զբոսաշրջիկներին:

Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում տեղավորման միջոցների ընդհանրություններն ու տարբերություններն ըստ կարգի, ուղղվածության գտնվելու վայրի և ճարտարապետության և կարողանում է ներկայացնել առաջադրված իրավիճակին համապատասխանող տեղավորման միջոցները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 14 ժամ

Գործնական աշխատանք` 20 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դասակարգել տեղավորման միջոցները և դրանց համարները` ըստ գոյություն ունեցող դասերի:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է նկարագրում տեղավորման միջոցների դասերը.

բ. ճիշտ է նկարագրում համարների դասերը.

գ. ճիշտ է դասակարգում ներկայացված տեղավորման միջոցները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել տեղավորման միջոցների տեսակներ և նկարագրել դրանց ու դրանց համարների դասերը, տրվում զբոսաշրջային պահանջմունքների մանրամասն նկարագիր և պահանջվում նշել դրանց բավարարման առավել նպատակահարմար տեղավորման միջոցը, համարը և դրանց դասերը:

Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար եթե ուսանողը կարողանում է ճիշտ նկարագրել տեղավորման միջոցների և դրանց համարների դասերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 14 ժամ

Գործնական աշխատանք` 22 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ հյուրանոցներին և զբոսաշրջային համալիրներին ներկայացվող պահանջները, մատուցվող ծառայությունների ցանկը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է նկարագրում հյուրանոցները և զբոսաշրջային համալիրները (հոթել, մոթել, ռոթել, ֆլոթել, զբոսաշրջային բազաներ, բունգալոներ, պանսիոններ և այլն).

բ. ճիշտ է ներկայացնում հյուրանոցներին և զբոսաշրջային համալիրներին ներկայացվող պահանջները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին հանձնարարվում է բնութագրել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների տեսակները, տրվում է որևէ հյուրանոցային տնտեսության օբյեկտի օրինակ և պահանջվում շարադրել դրան ներկայացվող պահանջները:

Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար եթե ուսանողը կարողանում է ճիշտ բնութագրել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների տեսակները և ճիշտ է նշում տրված հյուրանոցային տնտեսության օբյեկտի օրինակին ներկայացվող պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 22 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ և բնութագրել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հարմարավետության աստիճանները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում հյուրանոցային հարմարավետության աստիճանը.

բ. ճիշտ է բնութագրում հյուրանոցային հարմարավետության աստիճանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հարմարավետությունը բնութագրող ցուցանիշները, ոլորտում ընդունված միջազգային չափանիշները, տրվում է որևէ հյուրանոցային տնտեսության օբյեկտի նկարագիր և պահանջվում բնութագրել դրա հարմարավետության աստիճանը

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը կարողանում է վեր հանել հարմարավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, ճիշտ է ներկայացնում միջազգային չափանիշները և ճիշտ է բնորոշում նկարագրված օբյեկտի հարմարավետության աստիճանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍԾ-4-08-008**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների մասին, ինչպես նաև ձևավորել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների դասակարգման և տարբերակման կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կիմանա սննդի կազմակերպման հաստատությունների (ռեստորան, սրճարան, խորտկարան, բար, արագ սնունդ" Fast food" և այլն) ընհանրություններն ու հիմնական տարբերությունները, կկարողանա տարբերակել և ճիշտ դասակարգել այդ հաստատությունները: Սովորողը կիմանա սննդի կազմակերպման հաստատություններին ներկայացվող պահանջները՝ կախված դրանց կարգից և ուղղվածությունից, հասարակական սննդի կազմակերպման հիմնական սկզբունքները:

Մոդուլի տևողությունը՝ 40 ժամ դասախոսություն

68 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝ Չկան

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **տարբերակի հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները՝ ըստ կարգի և ուղղվածության.**
2. **դասակարգի հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները՝ ըստ գոյություն ունեցող դասերի.**

3. իմանա սննդի կազմակերպման տարբեր հաստատություններին ներկայացվող պահանջները, մատուցվող ծառայությունների ցանկը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տարբերակել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները` ըստ կարգի և ուղղվածության**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում հասարակական սննդի կազկերպման հաստատությունների հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները.

բ. ճիշտ է տարբերակում հասարակական սննդի կազմակերպման տարբեր կարգի և ուղղվածության հաստատությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կտրվի հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների ցանկ և կառաջարկվի ներկայացնել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, որից հետո կհանձնարարվի տարբերակել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները ըստ կարգի և ուղղվածության:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ են կատարված տարբերակումները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ամսագրեր, թեստեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 20 ժամ

Գործնական աշխատանք` 22 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դասակարգել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները` ըստ գոյություն ունեցող դասերի:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է նկարագրում հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների դասերը.

բ. ճիշտ է դասակարգում հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների դասերը, որից հետո կտրվի հասարակական սննդի կազմակերպման հաստատությունների ցանկ և կառաջարկվի դասակարգել հասարակական սննդի կազմակերպման հաստատությունները:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե դասակարգումները ճիշտ են կատարված:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ամսագրեր թեստեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 24 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ սննդի կազմակերպման տարբեր հաստատություններին ներկայացվող պահանջները, մատուցվող ծառայությունների ցանկը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում սննդի կազմակերպման տարբեր հաստատությունները (ռեստորան, սրճարան, բար, խորտկարան, ճաշարան և այլն).

բ. ճիշտ է ներկայացնում սննդի կազմակերպման հաստատություններին ներկայացվող պահանջները.

գ. ճիշտ է թվարկում սննդի կազմակերպման տարբեր հաստատություններում մատուցվող ծառայությունների ցանկը.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հանրային սննդի օբյեկտների տեսակները, որից հետո կհանձնարարվի ներկայացնել հանրային սննդի օբյեկտներին ներկայացվող պահանջներն ըստ տեսակի, այնուհետև ուսանողին կտվի հանրային սննդի օբյեկտների ցանկ և կառաջարկվի թվարկել յուրաքանչյուր օբյեկտում մատուցվող ծառայությունների ցանկը:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ են ներկայացված հանրային սննդի օբյեկտներին ներկայացվող պահանջները և հանրային սննդի օբյեկտներում մատուցվող ծառայությունների ցանկը լիարժեք է թվարկված:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ամսագրեր, մենյու, թեստեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 22 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ԷԹԻԿԵՏ»

Մոդուլի դասիչը՝ **ՋԲՍՇ-4-08-009**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ անհրաժեշտ գիտելիք ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատողների իրավունքների, աշխատանքային պայմանագրի, աշխատանքային պարտականությունների, հաստատության ներքին աշխատանքային կարգապահության, գործնական վարվեցողության կանոնների, մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի, արտաքին տեսքին ներկայացվող պահանջների, ինչպես նաև հաստատությունում կիրառվող սարքավորումների շահագործման և աշխատանքի անվտանգության կանոնների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել անձնական և արտադրական սանիտարական և հիգիենիկ նորմերին հետևելու, ինչպես նաև գործնական վարվելակերպի կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա պաշտպանել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր իրավունքները, պայմանավորվել գործատուի հետ և հետևել աշխատանքային պայմանագրի կատարմանը, հետևել սարքավորման և գույքի օգտագործման, ինչպես նաև հաստատությունում օգտագործվող սարքավորումների շահագործման աշխատանքի անվտանգության կանոններին և պահանջներին, ինչպես նաև անձնական և արտադրական սանիտարական և հիգիենիկ նորմերի: Կիմանա մասնագիտական

էթիկայի և գործնական վարվելակերպի կանոնները և սկզբունքները, կկարողանա հետևել զբոսաշրջային ոլորտի աշխատողի աշխատանքային կուլտուրային:

Մոդուլի տևողությունը` 26 ժամ դասախոսություն

46 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները` Չկան

Հատուկ պահանջներ` Չկան

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **իմանա իր աշխատանքային պարտականությունները` հաստատության ներքին կանոնակարգի և աշխատանքային ռեժիմով սահմանված շրջանակներում.**
2. **հետևի անձնական և արտադրական սանիտարական և հիգիենիկ նորմերին, սարքավորումների և գույքի օգտագործման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոններին և պահանջներին, հոգատար վերաբերվի հաստատության և մյուս աշխատակիցների գույքի և իրերի նկատմամբ.**
3. **իմանա գործնական վարվեցողության կանոնները, հետևի զբոսաշրջային ոլորտի աշխատողի աշխատանքի կուլտուրային.**
4. **իմանա մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները, կարողանա աշխատանքային իրավիճակներում դրսևորել կուլտուրա և ճիշտ վարվելակերպ.**
5. **իմանա իր արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, կարողանա հետևել այդ պահանջներին:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ իր աշխատանքային պարտականությունները` հաստատության ներքին կանոնակարգի և աշխատանքային ռեժիմով սահմանված շրջանակներում.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում ներգնա զբոսաշրջության կազմակերպչի` նորմատիվային ակտերով, ինչպես նաև հաստատության ներքին կանոնակարգով և աշխատանքային ռեժիմով սահմանված մասնագիտական գործունեության պարտականությունները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային ոլորտի հաստատության աշխատանքային ռեժիմի առանձնահատկությունները.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ներգնա զբոսաշրջության կազմակերպչի` նորմատիվային ակտերով ու զբոսաշրջային կազմակերպության ներքին կանոնակարգով և աշխատանքային ռեժիմով սահմանված մասնագիտական գործունեության պարտականությունները և ներկայացնել զբոսաշրջային ոլորտի հաստատության աշխատանքային ռեժիմի առանձնահատկություններն ի տարբերություն այլ հաստատությունների:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխանները տրված են մասնագիտորեն ճիշտ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, իրավական ակտեր:

## ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հետևել անձնական հիգիենայի և արտադրական սանիտարիայի նորմերին, սարքավորումների և գույքի օգտագործման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոններին և պահանջներին, հոգատար վերաբերվի հաստատության և մյուս աշխատակիցների գույքի և իրերի նկատմամբ.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է նկարագրում անձնական հիգիենայի և արտադրական սանիտարիայի նորմերը, դրանց անհրաժեշտությունն ու հետևելու կարգը.

բ. ճիշտ է ներկայացնում անձնական հիգիենայի և արտադրական սանիտարիայի պահանջները.

գ. ճիշտ է ներկայացնում սարքավորումների և գույքի օգտագործման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոններն ու պահանջները.

գ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատակիցների գույքի և իրերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորումները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել անձնական հիգիենայի և արտադրական սանիտարիայի նորմերն ու կարգը, դրանց անհրաժեշտությունն ու հետևելու կարգը, ներկայացնել սարքավորումների և գույքի օգտագործման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոններն ու պահանջները:

Ուսանողին կառաջադրվի պայմանական իրավիճակ, որի արդյունքում նա պետք է ներկայացնի կազմակերպության աշխատակիցների գույքի և իրերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորումները:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ներկայացված պատասխանների լիարժեք են և մասնագիտորեն համոզիչ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, իրավական ակտեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ գործնական վարվեցողության կանոնները, հետևել զբոսաշրջային ոլորտի աշխատողի աշխատանքի կուլտուրային.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ներկայացնում գործնական վարվեցողության կանոնները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության ոլորտի աշխատողի աշխատանքային կուլտուրան.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի պայմանական իրավիճակում ներկայացնել գործնական վարվեցողության համապատասխան կանոնները, ներկայացնել զբոսաշրջության ոլորտի աշխատողի աշխատանքային կուլտուրան:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ներկայացված պատասխանների լիարժեք են և մասնագիտորեն համոզիչ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, իրավական ակտեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները, կարողանալ աշխատանքային իրավիճակներում դրսևորել կուլտուրա և ճիշտ վարվելակերպ.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները.

բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքային իրավիճակներում կուլտուրա և ճիշտ վարվելակերպ դրսևորելու ձևը և կարգը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մասնագիտական էթիկայի և գործնական վարվելակերպի հիմունքներն ու սկզբունքները : Ուսանողին կտրվի առաջադրանք կոնկրետ իրավիճակներում ներկայացնել կուլտուրա և ճիշտ վարվելակերպ դրսևորելու ձևը և կարգը:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխանները տրված են մասնագիտորեն ճիշտ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 16 ժամ

Գործնական աշխատանք՝ 20 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. իմանալ իր արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, կարողանա հետևել այդ պահանջներին**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում արտաքին տեսքին ներկայացնող պահանջները.

բ. ճիշտ է նկարագրում արտաքին տեսքին հետևելու կարգը և ձևը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել արտաքին տեսքին ներկայացնող պահանջները և նկարագրել նկարագրում արտաքին տեսքին հետևելու կարգը և ձևը:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե պատասխանները տրված են մասնագիտորեն ճիշտ և համոզիչ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍՇ-4-08-010**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էքսկուրսիաները և զբոսաշրջային ճամփորդությունները սպասարկող հիմնական փոխադրամիջոցների տեսակների մասին գիտելիքներ, ինչպես նաև ձևավորել համապատասխան փոխադրամիջոց ընտրելու և հաճախորդին առաջարկելու, հաճախորդին առաջարկվող փոխադրամիջոցի մասին գրավոր հակիրճ և մատչելի նկարագրություն տրամադրելու և փոխադրամիջոցի պատվեր ընդունելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 28 ժամ դասախոսություն

44 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի **ԶԲՍՇ-4-08-004** մոդուլը:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **իմանա էքսկուրսիաները և զբոսաշրջային ճամփորդությունները սպասարկող հիմնական փոխադրամիջոցների տեսակները, դրանց ներկայացվող հատուկ պահանջները և տեխնիկական հագեցվածության աստիճանը.**
2. **ընտրի և հաճախորդին առաջարկի առավել համապատասխան փոխադրամիջոց.**
3. **հաճախորդին տրամադրի առաջարկվող փոխարամիջոցի գրավոր հակիրճ և մատչելի նկարագրություն.**
4. **ընդունի փոխադրամիջոցի պատվերը:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ էքսկուրսիաները և զբոսաշրջային ճամփորդությունները սպասարկող հիմնական տրանսպորտային միջոցների տեսակները, դրանց ներկայացվող հատուկ պահանջները և տեխնիկական հագեցվածության աստիճանը**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում էքսկուրսիաները և զբոսաշրջային ճամփորդությունները սպասարկող հիմնական փոխադրամիջոցների տեսակները.

բ. ճիշտ է թվարկում հիմնական փոխադրամիջոցների ներկայացվող հատուկ պահանջները.

գ. ճիշտ է ներկայացնում հիմնական փոխադրամիջոցների տեխնիկական հագեցվածության աստիճանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է զբոսաշրջային ճամփորդության պատվերի նմուշ և հանձնարարվում ընտրել տվյալ պատվերի սպասարկման համար անհրաժեշտ փոխադրամիջոցի տեսակը, հիմնավորել ընտրությունը, թվարկել այն հատուկ պահանջներն ու տեխնիկական հագեցվածության աստիճանը որոնց պետք է բավարարի ընտրված փոխադրամիջոցը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողի ընտրած փոխադրամիջոցը և դրան ներկայացվող հատուկ պահանջներն ու տեխնիկական հագեցվածության աստիճանը կարող են բավարարել ներկայացված պատվերի պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ընտրել և հաճախորդին առաջարկել առավել համապատասխան փոխադրամիջոց:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ընտրում առաջադրված պայմանական հաճախորդին առավել համապատասխան փոխադրամիջոց և հիմնավորում ընտրությունը.

բ. պայմանական հաճախորդին բանավոր կերպով ճիշտ է ներկայացնում առաջարկված փոխադրամիջի առավելությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է պայամանական հաճախորդի բնութագիր և հանձնարարվում ընտրել տվյալ հաճախորդին սպասարկման համար համապատասխան փոխադրամիջոցի տեսակը, հիմնավորել ընտրությունը ներկայացնելով անհրաժեշտ փաստարկներ պայմանական հաճախորդին համոզելու համար:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողի ընտրած փոխադրամիջոցը և այն առաջարկելու տարբերակը կարող է բավարարել պայմանական հաճախորդին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Հաճախորդին տրամադրել առաջարկվող փոխադրամիջոցի գրավոր հակիրճ և մատչելի նկարագրություն:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. փոխադրամիջոցի մասին տեղեկանքը կազմում է հակիրճ ու մատչելի՝ ներառելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները.

բ. ճիշտ է պահպանում տեղեկանքի կառուցվածքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է փոխադրամիջոցի տեսակի նկարագրություն և հանձնարարվում է կազմել այդ փոխադրամիջոցի մասին տեղեկանք:

Արդյունքի ձեռք բերումը համարվում է բավարար եթե ուսանողը կարողանում է կազմել փոխադրամիջոցի մասին տեղեկանք՝ ներառելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և պահպանելով տեղեկանքի ճիշտ կառուցվածքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ընդունել փոխադրամիջոցի պատվերը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է կատարում պատվերի հետ կապված հարցադրումները
բ. ճիշտ է ձևակերպում փոխադրամիջոցի պատվերը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Դասախոսը հանդես գալով զբոսաշրջային ճամփորդության պահանջարկ ներկայացնողի դերում հանձնարարում է ուսանողին համապատասխան հարցադրումների միջոցով պարզել փոխադրամիջոցի պատվեր ընդունելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և ձևակերպել փոխադրամիջոցի պատվերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն իր կատարած հարցադրումներով կարողանում է ստանալ անհրաժեշտ տեղեկություններն ու կատարել փոխադրամիջոցի պատվերը ձևակերպում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍՇ-4-08-011**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային պլանի (մարտավարության) մշակման, աշխատակիցների գործառույթների սահմանման, իրավունքների պատասխանատվության մշակման, աշխատանքի բաշխման, աշխատանքային գործունեության վերահսկման, կոնֆլիկտների հարթման, ռեսուրսների գնահատման և բաժանման, կառավարչական և մասնագիտական որոշումների ընդունման, կառավարչական հեղինակության ձևավորման կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա մշակել աշխատանքի մարտավարության հստակ ուղղություններ, կկարողանա մշակել աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականություններ, պատասխանատվություն և իրավունքներ, կատարել աշխատանքի բաժանում, վերահսկել աշխատակիցների աշխատանքը և հարթել կոնֆլիկտները աշխատակազմի ներսում, գնահատել ստորաբաժանման ռեսուրսները և կատարել բաշխում, ընդունել կառավարչական որոշումներ, ստեղծել կառավարչական հեղինակություն:

Մոդուլի տևողությունը՝ 46 ժամ դասախոսություն

62 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԶԲՇ-4-08-003, ԶԲՇ-4-08-006, ԶԲՇ-4-08-009 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **մշակի աշխատանքի մարտավարություն (աշխատանքային պլան).**
2. **մշակի իր ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները, պատասխանատվության չափը և իրավունքները (պաշտոնի անձնագիր), կատարի աշխատանքի բաշխում իր և նրանց միջև.**
3. **վերահսկի աշխատակազմի աշխատանքը և հարթի կոնֆլիկտները աշխատակազմի ներսում.**

4. գնահատի ստորաբաժանման ռեսուրսները և կատարի ռեսուրսների ճիշտ բաշխում.
5. ընդունի կառավարչական և մասնագիտական որոշումներ
6. ստեղծի կառավարչական հեղինակություն:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Մշակել աշխատանքի մարտավարություն (աշխատանքային պլան).**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատանքային պլանի նպատակները, կառուցվածքը, այն կազմելու սկզբունքներն ու մոտեցումները.

բ. ճիշտ է կազմում առաջադրված պայմանական կազմակերպության աշխատանքային պլան՝ ընդունված չափանիշներին համապատասխան:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել կազմակերպության աշխատանքային պլանի նպատակները, կառուցվածքը, այն կազմելու սկզբունքներն ու մոտեցումները: Ուսանողին կհանձնարարվի սահմանված չափանիշների համաձայն կազմել առաջադրված պայմանական կազմակերպության աշխատանքային պլան:

Արդյունքը ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կազմված աշխատանքային պլանը համապատասխանում է սահմանված չափանիշներին և աշխատանքը արտահայտում է առաջադրանքի գաղափարը:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, իրավական ակտեր:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Տեսական պարապմունք՝ | 8 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 12 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մշակել իր ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները, պատասխանատվության չափը և իրավունքները (պաշտոնի անձնագիր), կատարել աշխատանքի բաշխում իր և նրանց միջև:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է մշակում կազմակերպության առաջադրված պայմանական ստորաբաժանման աշխատակիցների գործառույթները.

բ. ճիշտ է սահմանում այդ ստորաբաժանման աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի բաժանումը իր և ստորաբաժանման աշխատակիցների միջև:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի մշակել կազմակերպության առաջադրված պայմանական ստորաբաժանման աշխատակիցների գործառույթներ և սահմանել նրանց իրավունքներն ու պարտականությունները, որից հետո ուսանողին կառաջադրվի խնդիր, որի դեպքում նա պետք է տարբեր սկզբունքներով կատարի աշխատանքի բաժանում իր և պայմանական ստորաբաժանման աշխատակիցների միջև:

Արդյունքի ծեռքբերումը համարվում է բավարար, եթե մշակված պայմանական ստորաբաժանման աշխատակիցների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները մասնագիտորեն իրատեսական են և չեն հակասում աշխատանքային օրենսդրությանը, իսկ աշխատանքի բաժանումը կատարված է համաչափ ըստ բարդության և ծավալի:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, իրավական ակտեր, թեստեր, խնդիրներ:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 10 ժամ

Գործնական աշխատանք` 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Վերահսկել աշխատակազմի աշխատանքը և հարթել կոնֆլիկտները աշխատակազմի ներսում.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ</u>

ա. ճիշտ է մշակում առաջադրված պայմանական ստորաբաժանման աշխատակազմի աշխատանքի վերահսկման չափանիշներ.

բ. առաջարկում է առաջադրված կոնֆլիկտային իրավիճակի հարթման ճիշտ լուծումներ.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի մշակել առաջադրված պայմանական ստորաբաժանման աշխատանքի վերահսկման չափանիշներ: Նաև կտրվի առաջադրանք պայմանական կոնֆլիկտային իրավիճակում առաջադրել ճիշտ լուծումներ:

Արդյունքը ծեռքբերումը համարվում է բավարար, եթե մշակված աշխատանքի վերահսկման չափանիշները և կոնֆլիկտային իրավիճակի համար առաջադրված լուծումները իրատեսական են ըստ նպատակների և չեն հակասում օրենսդրությանը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստ, իրավական ակտեր, խնդիրներ:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 8 ժամ

Գործնական աշխատանք` 10 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Գնահատել ստորաբաժանման ռեսուրսները և կատարել ռեսուրսների ճիշտ բաշխում.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ</u>

ա. ճիշտ է գնահատում առաջադրված պայմանական ստորաբաժանման ռեսուրսները.

բ. ճիշտ է կատարում պայմանական ստորաբաժանման ռեսուրսների բաշխում

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կտրվի պայմանական ստորաբաժանման ռեսուրսների ցանկ և աշխատակազմ, որից հետո կհանձնարարվի գնահատել ռեսուրսները և կատարել ռեսուրսների բաշխում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կատարված առաջադրանքը արդյունավետության տեսանկյունից իրատեսական է:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ընդունել կառավարչական և մասնագիտական որոշումներ.**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

ա. առաջադրված իրավիճակի համար կատարում է ճիշտ վերլուծություն,

բ. առաջադրված իրավիճակի համար կայացնում է կառավարչական և մասնագիտական արդյունավետ որոշումներ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կտրվի պայմանական իրավիճակ և կհանձնարարվի վերլուծել իրավիճակը և առաջադրել որոշումներ կառավարչական և մասնագիտական առումով:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կատարված վերլուծությունը և առաջադրված որոշումները արդյունավետության տեսակնյունից իրատեսական են և չեն հակացում օրենսդրությանը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ստեղծել կառավարչական հեղինակություն:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ</u>

ա. ճիշտ է ներկայացնում հեղինակություն հասկացությունը և նրա տեսակները.

բ. ճիշտ է ներկայացնում հեղինակության ստեղծման տեխնոլոգիան

գ. կարողանում է ցուցադրել հեղինակավոր ղեկավարի կերպար

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հեղինակություն հասկացությունը, նրա տեսակները և ստեղծման տեխնոլոգիան: Ուսանողին կտրվեն պատկերներ համապատասխան իրավիճակներով և կհանձնարարվի ցուցադրել հեղինակավոր ղեկավարի 10 ճիշտ կերպար:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է ներկայացված հեղինակության ստեղծման տեխնոլոգիան և ճիշտ է ցուցադրված հեղինակավոր ղեկավարի կերպարը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ, պատկերներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍԾ-4-08-012**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել զբոսաշրջային ծառայությունների մատուցման բնագավառում համապատասխան կազմակերպությունների հետ կապերի հաստատման, տեղեկատվության օգտագործման, կապի միջոցների կիրառման, երկխոսությունների ծավալման, հարցադրումների և պատասխանների գրառման, բանակցային տեխնիկայի օգտագործման, ներկայացուցչական գործառույթների իրականացման, պահանջարկների դրսևորման, առաջարկի և պայմանների ուսումնասիրման և վերլուծության, համագործակցության նպատակով առավել նպատակահարմար կազմակերպության ընտրության, ինչպես նաև կառուցողական համագործակցության կարողություններ:

Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա կապեր հաստատել համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ, ուսումնասիրել նրանց առաջարկը և պայմանները, բանակցել կազմակերպությունների հետ, կայացնել որոշումներ ծառայություններ մատուցող առավել նախընտրելի կազմակերպության ընտրության վերաբերյալ:

Մոդուլի տևողությունը՝ 48 ժամ դասախոսություն

60 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԶԲԾ-4-08-001, ԶԲԾ-4-08-003, ԶԲԾ-4-08-004, ԶԲԾ-4-08-005, ԶԲՍԾ-4-08-006, ԶԲՍԾ-4-08-007, ԶԲՍԾ-4-08-008, ԶԲՍԾ-4-08-009 և ԶԲՍԾ-4-08-010 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **կապեր հաստատի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ**
2. **բանակցի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ.**
3. **որոշում կայացնի ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրության վերաբերյալ.**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կապեր հաստատել համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ</u>

ա. ցուցադրում է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններ գտնելու և դրանց հետ կապեր հաստատելու համար տեղեկատվական բազան ճիշտ օգտագործելու օրինակներ.

բ. կարողանում է օգտվել կապի բոլոր միջոցներից

դ. ճիշտ է կատարում հարցադրումները և գրառում պատասխանները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կտրվի պայմանական տեղեկատվական բազա, կսահմանվեն նպատակներ և կհանձնարարվի ցուցադրել դրանց գտնելու և կապեր հաստատելու 3 օրինակ, այնուհետև

կառաջարկվի ընտրել իրավիճակին համապատասխան կապի միջոց և օգտագործել այն, որից հետո դերային խաղի միջոցով կհանձնարարվի կատարել հարցադրումներ և գրառել պատասխանները::

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե կատարված հանձնարարության բոլոր փուլերը կատարվել են «լավ» մակարդակով:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ, կապի միջոցներ, տեղեկատու:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 14 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանակցել ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է օգտագործում բանակցությունների վարման տեխնիկան.

բ. ճիշտ է ներկայացնում իր պայմանական կազմակերպության գործունեությունը.

գ. ճիշտ է ներկայացնում իր պայմանական կազմակերպության առաջարկը:

դ. բանակցությունների արդյունքում կարողանում է տրամաբանական հիմնավորումներով ինտելեկտուալ ազդեցություն գործել պայմանական զրուցակցի վրա

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Դերային խաղի միջոցով ուսանողին կտրվի խնդիր և նպատակ, որից հետո կհանձնարարվի բանակցել պայմանական կազմակերպության ներկայացուցչի հետ՝ ճիշտ օգտագործելով բանակցությունների վարման տեխնիկան, որից հետո կհանձնարարվի ներկայացնել իր պայմանական կազմակերպության գործունեությունը՝ հաշվի առնելով պայմանական իրավիճակը, ներկայացնել կազմակերպության առաջարկը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է օգտագործում բանակցությունների վարման տեխնիկան, լիարժեք ներկայացնում է իր պայմանական կազմակերպության գործունեությունը և առաջարկը, կարողանում է բանակցությունների արդյունքում տրամաբանական հիմնավորումներով ինտելեկտուալ ազդեցություն գործել պայմանական զրուցակցի վրա:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 22 ժամ

Գործնական աշխատանք՝ 28 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Որոշում կայացնել ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրության վերաբերյալ.**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է գնահատում ծառայություններ մատուցող կազմակերպությունների առաջարկը.

բ. ճիշտ վերլուծություն է կատարում առավել նախընտրելի կազմակերպության ընտրության վերաբերյալ՝ ըստ առաջարկի.

գ. ճիշտ է փաստարկում ընտրված կազմակերպության առավելությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Ուսանողին կառաջադրվի նպատակ և կտրվի ծառայություններ մատուցող կազմակերպությունների և դրանց առաջարկների ցանկ, որից հետո կհանձնարարվի ըստ նպատակի գնահատել կազմակերպությունների առաջարկը, կատարել վերլուծություն առավել նախընտրելի կազմակերպության ընտրության վերաբերյալ ըստ առաջարկի, կատարել ընտրություն, որից հետո կառաջարկվի փաստարկել ընտրված կազմակերպության առավելությունները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է կատարել ճիշտ գնահատում և վերլուծություն, կարողանում է համոզիչ կերպով հիմնավորել ընտրությունը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, թեստեր, խնդիրներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ԿԱԶՄՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԶԲՍԾ-08-013**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել անհրաժեշտ կարողություններ զբոսաշրջային փաթեթի նախագծման, մշակման և կազմման համար:

Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը կիմանա զբոսաշրջային փաթեթի կազմությունը, նրա տեսակները, կազմման համար պահանջվող բոլոր տարրերը: Կտիրապետի զբոսաշրջային փաթեթ ձևավորելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներին: Կյուրացնի զբոսաշրջային փաթեթի անհրաժեշտ կոմպոնենտները լրացնելու համար կոմունիկացիոն կապերն ու տեխնոլոգիաները, բանակցային և պայմանագրային նրբությունները:

Մոդուլի տևողությունը՝ 68 ժամ դասախոսություն

76 ժամ գործնական պարապմունք

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԶԲՍԾ-4-08-001, ԶԲՍԾ-4-08-002,ԶԲՍԾ-4-08-003, ԶԲՍԾ-4-08-004, ԶԲՍԾ-4-08-005, ԶԲՍԾ-4-08-006, ԶԲՍԾ-4-08-007, ԶԲՍԾ-4-08-008, ԶԲՍԾ-4-08-010, ԶԲՍԾ-4-08-011, ԶԲՍԾ-4-08-012 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. **իմանա զբոսաշրջային փաթեթի կազմությունը, նրա տեսակները, կազմման համար պահանջվող բոլոր տարրերը, նախապատրաստական աշխատանքները.**
2. **կազմի զբոսաշրջային փաթեթ.**
3. **Իրականացնի զբոսաշրջային փաթեթի բաղադրիչները լրացնելու համար անհրաժեշտ կոմունիկացիոն կապերն ու տեխնոլոգիաները, կիրառի բանակցային և պայմանագրային նրբությունները:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ զբոսաշրջային փաթեթի կազմությունը, նրա տեսակները, կազմման համար պահանջվող բոլոր տարրերը, նախապատրաստական աշխատանքները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության ապրանք և փաթեթ հասկացությունները.
բ. ճիշտ է դասակարգում զբոսաշրջային փաթեթների տեսակները.
գ. ճիշտ է նկարագրում զբոսաշրջային փաթեթի բոլոր բաղադրիչները, Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության կողմից և ՀՀ օրենքով սահմանվող նվազագույն պահանջները զբոսաշրջային փաթեթի տարրերի վերաբերյալ.
դ. ճիշտ է ներկայացնում նոր զբոսաշրջային փաթեթ ստեղծելու կամ եղածը վերափոխելու խնդրի առաջացման պատճառները.
ե. ճիշտ է իրականացնում զբոսաշրջային փաթեթ ձևավորելու նախապատրաստական աշխատանքները (կամ ցուցադրում է դրանց օրինակներ):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին ներկայացվում է զբոսաշրջային պատվեր և հանձնարարվում ըստ այդ պատվերի ընտրել զբոսաշրջային փաթեթի տեսակը, անհրաժեշտ բաղադրիչները և լրացուցիչ բաղադրիչները նշելով ինչ դեպքերում դրանք կարելի է ներառել և փաթեթ ձևավորելու նախապատրաստական աշխատանքները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն ընտրում է զբոսաշրջային փաթեթի ճիշտ տեսակ, նշում է բոլոր բաղադրիչները պահպանելով օրենքով սահմանվող նվազագույն պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 28 ժամ

Գործնական աշխատանք՝ 24 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմել զբոսաշրջային փաթեթ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կազմում զբոսաշրջային փաթեթ՝ ընդունված կարգին և առաջադրված պահանջներին համապատասխան.
բ. ճիշտ է փորձարկում զբոսաշրջային փաթեթը, դրա հիման վրա ճիշտ է կատարում գնահատումը.
գ. բացահայտում է փաթեթի թերի կողմերը, ճիշտ է կատարում անհրաժեշտ շտկումները և կազմում վերջնական տարբերակ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին ներկայացվում է զբոսաշրջային պատվեր և հանձնարարվում ըստ այդ պատվերի ինքնուրույն կազմել զբոսաշրջային փաթեթ, նշել այն փորձարկելու ձևը և սկզբունքները, որոնք պետք է հաշվի առնել վերջնական տարբերակը ընտրելիս:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը զբոսաշրջային փաթեթը կազմելուց ներառում է բոլոր բաղադրիչները և պահպանում է օրենքով սահմանվող նվազագույն պահանջները:

МЕТОДАБАНОՒԹЗՈՒՆԸ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատվական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 26 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իրականացնել զբոսաշրջային փաթեթի բաղադրիչները լրացնելու համար անհրաժեշտ կոմունիկացիոն կապերն ու տեխնոլոգիաները, կիրառել բանակցային և պայմանագրային նրբությունները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային փաթեթի տարրերը մատակարարող կազմակերպությունների հետ կապեր հաստատելու բոլոր կոմունիկացիոն եղանակները.

բ. ճիշտ է ցուցադրում մի կողմից զբոսաշրջային օպերատորի և մյուս կողմից զբոսաշրջության շուկայում գործող այլ սուբյեկտների միջև զբոսաշրջային փաթեթի կազմման նպատակով տեղի ունեցող համագործակցության և պայմանագրային գործընթացի օրինակներ.

գ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջության փաթեթի մատուցման ժամանակ, ըստ պայմամանագրի, կողմերի պարտավորությունները, դրանց կատարման կարգը, ցուցադրում ֆորս-մաժորային իրավիճակների հարթման օրինակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին ներկայացվում է գործարարական մի իրավիճակ երբ անհրաժեշտություն է ծագել մատակարարող կազմակերպությունների հետ կապեր հաստատել, համագործակցել ու պայմանագրեր կապել և հանձնարարվում է ներկայացնել այդ գործընթացն ու կազմել պայմանագրի տիպային օրինակ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է նկարագրում այդ գործընթացն ու ներկայացրած պայմանագրի օրինակում զետեղված են անհրաժեշտ բոլոր կետերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն և տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հնարավորություններ (համացանց, ժողովածուներ):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 26 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱԶՄՈՒՄ»

Մոդուլի դասիչը` **ԶԲՍԾ-4-08-014**

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է «Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ» (Ներգնա զբոսաշրջության) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել հաշվապահական հաշվառման տարրական փաստաթղթաշրջանառություն իրականացնելու, մրցակցային թերթ կազմելու, մրցակցային բանակցություններ վարելու, ըստ մրցակցային թերթի` հաղթողն ընտրելու, զբոսաշրջային փաթեթի նախահաշիվ կազմելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը` 42 ժամ դասախոսություն

66 ժամ գործնական պարապմունք

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԶԲՍԾ-4-08-001, ԶԲՍԾ-4-08-002,ԶԲՍԾ-4-08-003, ԶԲՍԾ-4-08-004, ԶԲՍԾ-4-08-005, ԶԲՍԾ-4-08-006, ԶԲՍԾ-4-08-007, ԶԲՍԾ-4-08-008, ԶԲՍԾ-4-08-010, ԶԲՍԾ-4-08-011, ԶԲՍԾ-4-08-012, ԶԲՍԾ-4-08-013 մոդուլները:

Հատուկ պահանջներ` Չկան

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

5. **իրականացնի հաշվապահական հաշվառման տարրական փաստաթղթաշրջանառություն.**
6. **կազմի մրցակցային թերթ.**
7. **կազմի զբոսաշրջային փաթեթի նախահաշիվ:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իրականացնի հաշվապահական հաշվառման տարրական փաստաթղթաշրջանառություն:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման նպատակն ու դրա հիմնական սկզբունքները.

բ. տարբերակում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (ձևերը).

գ. ճիշտ է լրացնում հաշվապահական հաշվառման հիմնական փաստաթղթերը (ձևերը):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել հաշվապահական հաշվառման հիմնական նպատակները, ներկայացվում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի նմուշներ (պահանջագիր, հաշիվ ֆակտուրա, տնտեսական գործարքների համար պահանջվող փաստաթղթեր` ամրագրման հավաստագրեր և այլն) և հանձնարարվում տարբերակել դրանք, նշել թե ինչ գործառույթների ժամանակ են դրանք անհրաժեշտ և լրացնել դրանք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հիմնական նպատակները, ճիշտ է տարբերակում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի նմուշները և կարողանում է դրանք անթերի լրացնել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի նմուշներ և պաշտոնական տեղեկագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք` 20ժամ

Գործնական աշխատանք` 30 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմել մրցակցային թերթ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում մրցակցային թերթի պահանջները, սահմանում չափանիշները.

բ. ճիշտ է կազմում մրցակցային թերթը.

բ. ճիշտ է գնահատում մրցակցային թերթի արդյունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին հանձնարարվում է կազմել մրցակցային թերթ պահպանելով բոլոր պահանջներն ու չափանիշները, տրվում է մեկ ուրիշի կազմած մրցակցային թերթ և հանձնարարվում գնահատել դրա արդյունքները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը մրցակցային թերթը կազմելուց պահպանում է բոլոր պահանջներն ու չափանիշները և ճիշտ է գնահատում մրցակցային թերթի արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.Կազմել զբոսաշրջային փաթեթի նախահաշիվ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ներկայացնում թիրախային խմբի պահանջները.

բ. ճիշտ է ներկայացնում զբոսաշրջային փաթեթի նախահաշիվ կազմելու սկզբունքները՝ ելնելով մրցակցային թերթի և թիրախային խմբի պահանջների արդյունքներից.

գ. կազմում է զբոսաշրջային փաթեթի մրցունակ նախահաշիվ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրվում է զբոսաշրջային թիրախային խմբի օրինակ և հանձնարարվում ներկայացնել թե ինչ պահանջներ կունենա տվյալ խումբը, տրվում է նաև մրցակցային թերթի օրինակ և հանձնարարվում սրանց հիման վրա կազմել զբոսաշրջային փաթեթի նախահաշիվ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը կարողանում է ճիշտ բացահայտել թիրախային խմբի պահանջները և կազմել զբոսաշրջային փաթեթի մրցունակ նախահաշիվ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական և գործնական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ